

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/5

29 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ 11.07.2014 թ-ի գրությամբ բերված միջնորդությունը 08.04.2013 թ-ից մինչև 31.12.2013 թ. ընկած ժամանակահատվածում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

«Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ գրությունում բերված փաստարկները.

«Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ-ն դեռևս 2013 թ-ի մայիսի 5-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում սահմանված կարգով ներկայացրել է ավելացված արժեքի հարկի վճարող հաշվառվելու և ավելացված արժեքի հարկի վճարողի հաշվառման համար կիրառելու մասին, որի ստացման վերաբերյալ հարկային մարմնից ստացվել է համապատասխան ծանուցում: ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության կողմից 2013 թ-ի մայիսի 7-ին տրվել է հավաստագիր առ այն, որ «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ 08.04.2013 թ-ից մինչև 31.12.2013 թ-ը ներառյալ հարկային մարմնում հաշվառված է որպես ավելացված արժեքի հարկ վճարող: Հետևաբար, վարչարարությունն իրականացնող մարմնի կողմից ստանալով որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառված լինելու փաստը հաստատող համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ, այն հիմք է հանդիսացրել ընկերության հետագա գործունեությունը կազմակերպելու համար, այդ թվում՝ 2013 թ-ի II և III եռամսյակների ընթացքում դուրս է գրել հարկային հաշիվներ՝ կրեդիտում առաջացնելով ԱԱՀ և դեբետագրել ստացված հաշիվների ԱԱՀ-ն:

2013 թ-ի II, III և IV եռամսյակների համար ներկայացվել է ավելացված արժեքի հարկի հաշվարկներ (բացառելով շրջանառության հարկ վճարող համարվելը):

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 23.6/p186712/-14 առ 2014 թ-ի փետրվարի 3-ի նամակով ընկերությունը 12.06.2014 թ-ին դիմել է Կենտրոնի հարկային տեսչություն 2013 թ-ի ապրիլի 8-ից ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու նպատակով, սակայն ստացել է պատասխան, որ ընկերությունը կարող է համարվել ԱԱՀ վճարող ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011 թ-ի փետրվարի 11-ի թիվ 51-Ն հրամանով սահմանված հայտարարությունը ներկայացնելու դեպքում:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 2014 թ-ի փետրվարի 3-ին կայացած ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 23.6/186712/-14, ըստ որի, բոլոր այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չի կիրառվի օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցները և հարկ վճարողն իր՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու հայտարարությանը համապատասխան կշարունակի համարվել ԱԱՀ վճարող:

Ելնելով վերոնշյալից՝ ընկերությունը խնդրում է «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ-ին 2013 թ-ի ապրիլի 8-ից ճանաչել ավելացված արժեքի հարկ վճարող:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 07.05.2013 թ-ին ներկայացվել է հայտարարություն «Որպես ԱԱՀ-ի վճարող հաշվառվելու և ԱԱՀ-ի վճարողի հաշվառման համար կիրառելու մասին»: Նշված հայտարարության ներկայացմամբ «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ-ն 2013 թ-ի ապրիլի 8-ից իրեն համարել է ԱԱՀ վճարող, ինչը, սակայն, չի ընդունվել Կենտրոնի ՀՏ կողմից, քանի որ ԱԱՀ վճարող համարվելու համար վերոգրյալ հայտարարության փոխարեն ընկերության կողմից պետք է ներկայացվեր հայտարարություն «ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ»:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովն բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմնին ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված թիվ 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ, Հանձնաժողովը գտնում է, որ «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ գրությամբ բերված միջնորդությունը 2013 թ-ի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

«Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ 11.07.2014 թ-ի գրությամբ բերված միջնորդությունը 08.04.2013 թ-ից մինչև 31.12.2013 թ. ընկած ժամանակահատվածում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ